

ՀՏԴ 327.5(479.243.)Քաղաքագիտություն

Հրայր ՓԱՇԱՅԱՆ

ԱրՊՀ, ք.գ.թ., դոցենտ, փիլիսոփայության և քաղաքագիտության ամբիոն

E-mail: hrayr.pashayan@mail.ru

Լիանա ԲԱԼԱՅԱՆ

Ստեփանակերտի համար 2 հիմնական դպրոցի ուսուցչուհի

E-mail: balayan-lili@mail.ru

ՓԱԹԵԹԱՅԻՆ ԵՎ ՓՈԻԼԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ. ՆՐԱՆՑ ԴԵՐԸ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԵՐՊԱՐԻ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՈՒՄ*

Հոդվածում ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության կարգավորման շուրջ ներկայումս ստեղծված փակուղային իրավիճակի համատեքստում վերլուծված են հիմնախնդրի համընդգրկուն կարգավորման նպատակով ներկայացված փաթեթային և փուլային անվանումները ստացած փաստաթղթերը: Հակամարտության լուծմանն ուղղված քայլերի վերլուծությունը ցույց է տալիս, որ կարգավորման այս կամ այն տարբերակի ձևավորումը անվիջականորեն կապված է խնդրի իրավաքաղաքական փաստարկումների գիտակցումից, ձևակերպումներից ու դրա ներկայացումից:

Բանալի բառեր՝ Ղարաբաղյան հակամարտություն, փաթեթային տարբերակ, փուլային տարբերակ, կարգավորման գործընթաց, իրավաքաղաքական փաստարկներ, հակամարտության կերպար:

Г.Пашаян, Л. Балаян

ПАКЕТНЫЕ И ПОЭТАПНЫЕ ВАРИАНТЫ: ИХ РОЛЬ В ВОСПРИЯТИИ ОБРАЗА КАРАБАХСКОГО ПРОТИВОСТОЯНИЯ

В статье обсуждены документы, представленные с целью всеобъемлющего урегулирования и получившие название "пакетный и поэтапный", в контексте ныне созданной тупиковой ситуации по вопросу урегулирования азербайджано-карабахского противостояния. Анализ шагов направленных на решение противостояния показывает, что формулирование того или иного варианта урегулирования непосредственно связано с осознанием политико-правовых аргументов, формулирования и его представления.

Ключевые слова: Карабахское противостояние, пакетный вариант, поэтапный вариант, процесс урегулирования, политико-правовые аргументы, образ противостояния

H. Pashayan, L. Balayan

**PACKAGE AND STAGE OPTIONS: THEIR ROLE IN
PERCEPTION OF THE IMAGE OF KARABAKH
CONFRONTATION**

The article discusses the documents submitted for the purpose of a general settlement and received the name of “package and step-by-step” in the context of the current deadlock on the settlement of the Azerbaijani-Karabakh confrontation.

An analysis of the steps aimed at resolving confrontation shows that the formulation of a variant of the settlement is directly related to the understanding of political and legal arguments, formulation and presentation.

Key words: Karabakh confrontation, package version, stage-by-stage version, settlement process, political and legal arguments, image of confrontation.

Ադրբեջանա-ղարաբադյան հակամարտության կարգավորման շուրջ ստեղծված ներկայիս փակուղային իրավիճակը հասկանալու, պատճառներն ու նախադրյալները վեր հանելու տեսանկյունից կարևոր նշանակություն ունեն հիմնախնդրի համընդգրկուն կարգավորմանն ուղղված փաստաթղթերի վերլուծությունը: Խոսքը մասնավորապես վերաբերում է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների՝ հակամարտող կողմերին ներկայացված և հանրությանը հայտնի փաթեթային և փուլային (ընդհանուր պնդություն տարբերակը վերլուծության առանձին թեմա է) տարբերակներին: Թվում է, թե ավելի քան երկու տասնամյակ առաջ ներկայացված ու մերժված առաջարկները որևէ կապ չունեն ներկայիս իրողությունների հետ: Սակայն պարզվում է, որ կարգավորման «սխալ հիմքերը» դրվել են հենց այդ տարիներին, մասնավորապես՝ 1996-1998 թ-ին: Այդ ընթացքում տեղի ունեցան այնպիսի գործընթացներ, որոնք հանրային ընկալումներում ամբողջությամբ խեղաթյուրեցին հիմնախնդրի իրական կերպարը: Դրա արդյունքում արդեն 1996-ին Լիսաբոնյան գազաթնաժողովում հնչեցվեց ԵԱՀԿ գործող նախագահի հակահայկական հայտարարությունը՝ որին աջակցել էին կառույցի բոլոր անդամ պետությունները¹: Այնուհետև 1997-1998 թթ. ներկայացված հակամարտության կարգավորման տարբերակներն են, որոնցում ճանաչվում էր Ադրբեջանի՝ արդեն իսկ գոյություն չունեցող և մասնավորապես Բաքվի իշխանությունների կողմից ռուսական ռազմակալման (окупация) արդյունք հռչակված ու անօրինական համարվող նախկին ԱդրխՍՀ տարածքային ամբողջականությունը: Հանուն ճշմարտության պետք է ասել, որ դրան հնարավոր եղավ հասնել ոչ միայն Ադրբեջանի նախկին քաղաքականության կամ արտաքին ուժերի դավադրության, այլև հայկական «կողմի դիվանագիտական գործունեության» արդյունքում: Դրա բուն էությունն արտահայտվել է ՀՀ առաջին նախագահի՝ զարաբադյան շարժման նախկին առաջնորդի հայ ժողովրդին ուղղված առաջին և վերջին հրապարակային ուղերձում: Լևոն Տեր-Պետրոսյանը դիմում էր ժողովրդին՝ համոզելու Ղարաբադյան հիմնահարցում որդեգրած պարտվողական դիրքորոշման ճշմարտացիությունը²:

Ինչպես նշվեց, 1997թ. միջնորդների կողմից ներկայացվեց հիմնախնդրի համապարփակ կարգավորման «փաթեթային», իսկ այնուհետև «փուլային» անվանումներ ստացած տարբերակները: Ինչպիսի փաստարկներ են առկա նշված

* Հետագոտությունն իրականացվել է ԼՂՀ ԿԳՆ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության N SCS 17/003 գիտական թեմայի շրջանակներում:

¹ Փաշայան Հ. Բալայան Լ., «Լիսաբոնյան Գազաթնաժողովը Ղարաբադյան կարգավորման գործընթացում. պատճառներ, հետևանքներ, դասեր» վերտառությամբ հոդվածը ներկայացվել է Արցախյան շարժման 30-ամյակին նվիրված գիտաժողովում և գտնվում է տպագրման փուլում:

² Տեր-Պետրոսյան Լևոն, «Պատերազմ թե՛ խաղաղություն. լրջանալու պահը», Հայաստանի Հանրապետություն, 1 նոյեմբերի, 1997 թ.:

փաստաթղթերում, և որոնք են նման բովանդակությամբ կարգավորման տարբերակների առաջացման պատճառները: Չէ որ դրանք հենց այնպես «դատարկ տեղը» չեն առաջացել: Իհարկե, հարցին մակերեսային մոտեցում ցուցաբերելու պարագայում կարելի է ընդհանրապես չքննարկել դրանց բովանդակությունը՝ բացարձակ անընդունելիության, մերժված լինելու համատեքստում կամ պարզապես փորձել մոռացության մատնել դրանց գոյությունն առհասարակ: Սակայն հանդիսանալով հակամարտության տարեգրության անբաժանելի մասնիկը՝ դրանք հանդիսանում են նաև հիմնախնդրի, այսպես կոչված, համապարփակ լուծմանն ուղղված և հանրությանը հայտնի այն եզակի առաջարկները, որոնցում մանրամասն ներկայացված էին կարգավորման գրեթե բոլոր տարրերը՝ սկզբից մինչև վերջ:

Փաստաթղթերի բովանդակային վերլուծությունն անհրաժեշտ է նաև դրանցում առկա շեշտադրումները պարզաբանելու և կողմերի մերժման պատճառները հասկանալու համար, որոնք կարևորվում են նաև հետագա առաջարկների մշակման ու ներկայացման տեսանկյունից: Միաժամանակ, ինչպես արդեն նշվեց, վերոնշյալը կարևոր է Ղարաբաղյան հակամարտության կարգավորման շուրջ ներկայումս ստեղծված փակուղային իրավիճակը հասկանալու տեսանկյունից: Վերջապես պետք է ասել, որ նշված տարբերակները, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ասելով, օրակարգից դուրս չեն եկել, ինչի մասին է վկայում, օրինակ, 2018 թվականի սկզբներին ՌԴ ԱԳ նախարար Ս. Լավրովի ամենամյա մամուլի ասուլիսին հնչեցրած հայտարարությունը¹: Բոլոր դեպքերում, ինչպես պատմական փորձն է վկայում, էթնոքաղաքական հակամարտությունների խաղաղ լուծման երկու ճանապարհ գոյություն ունի. նախապես համաձայնեցնել հակամարտող կողմերի բոլոր գործողությունները (փաթեթային տարբերակ) կամ քայլ առ քայլ հասնել խնդրի լուծմանը (փուլային տարբերակ): Հետևաբար, եթե նույնիսկ տասնամյակներ անցնեն, միևնույն է հակամարտության խաղաղ կարգավորման համար այլ տարբերակներ դեռևս գոյություն չունեն:

1997թ. մայիսի 31-ին տարածաշրջան կատարած այցի ընթացքում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները Լիսաբոնյան գազաթնաժողովից գրեթե կես տարի անց՝ ՀՀ-ի և ԱՀ-ի իշխանություններին ներկայացրին «փաթեթային տարբերակ» անվանումը ստացած «Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման համընդգրկուն համաձայնագրի» նախագիծը: Այն բաղկացած էր «Նախաբանից», «Զինված հակամարտության դադարեցում» անվանակոչված թիվ 1 համաձայնագրից, «Հավելված 1-ից (գործերի դուրսբերման իրականացում և տեղահանված անձանց վերադարձ. աշխարհագրական չափորոշիչներ, ժամանակացույցեր և անվտանգության դիտանկյուններ), հավելված 2-ից (անվտանգության միջանկյալ միջոցառումներ. հանձնաժողովների մանդատները, հսկողության և անվտանգության ռեժիմի չափորոշիչները), «Կարգավիճակ» վերնագրված թիվ 2 համաձայնագրից և «Հակամարտող կողմերի վստահության ամրապնդմանն ուղղված միջոցառումներ» բաժնից²: Եվ այսպես.

1. Մինսկի խմբի համանախագահներին ուղղված պաշտոնական Երևանի նամակում՝ ողջունելով «համանախագահող երկրների համատեղ ջանքերը ԼՂ հակամարտության շուրջ ընթացող բանակցություններին նոր լիցք հաղորդելու ուղղությամբ», նշվում էր, որ «ներկա նախագիծը լի է բովանդակային ու սկզբունքային թերություններով», և ներկայացվել է մեծաթիվ լուրջ նկատառումներ, առարկություններ և առաջարկություններ³: Պաշտոնական դիրքորոշման մեջ նաև շեշտվել էր, որ բոլոր

¹ Лавров о Карабахском конфликте: нужен поэтапный подход.

<https://ru.armeniasputnik.am/columnists/20180116/10174439/lavrov-o-karabahskom-konflikte-nuzhen-poehtapnyj-podhod.html>

² *Տե՛ս* <http://www.hzh.am/LGH-Himnaharc/Patetain.html>:

³ «Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիր. կարգավորման ուղիներ», խորհրդարանական լսումներ, 29-30 մարտի, 2005թ., Եր., 2006, էջ 466-469:

վիճարկելի ու անընդունելի կետերի վերջնական համաձայնեցումը պետք է լինի բանակցային գործընթացի արդյունքում¹:

2. Անդրադառնալով փաստաթղթի վերլուծությանը՝ անհրաժեշտ է նշել, որ այն կազմվել էր ոչ թե կողմերի պայմանավորվածությունների, այլև միջնորդների կողմից հակամարտությունը լուծելու սեփական տեսակետի արդյունքում², ինչը նրան կտրել էր օբյեկտիվ իրականությունից: Դա է պատճառներից մեկը, որ ամբողջականության մեջ փաստաթուղթը ոչ միայն անիրատեսական էր, այլև հակասական, ինչը ըստ էության, կապված է նաև այն կազմողների և հակամարտող կողմերի անհամաչափ արժեքային ընկալումների ու մտածելակերպի տարբերության հետ: Թերևս դրանով կարելի է բացատրել այն հանգամանքը, որ մի կողմից առաջարկվում էր խնդիրը լուծել անկենսունակությունը բազմիցս ապացուցած հինին վերադառնալով՝ Լեռնային Ղարաբաղը նորից Ադրբեյջանին ենթարկելու ճանապարհով (խորհրդային տարբերակ), մյուս կողմից՝ արևմտյան արժեհամակարգին համապատասխանող մոտեցումների շրջանակներում, ինչպիսիք են բարեկեցությունը, տնտեսական զարգացման հնարավորությունները և այլ կարևոր, բայց անփոփոխելի ապահովմանն ուղղակիորեն չառնչվող չափանիշներ, որոնք մի շարք հակամարտությունների պարագայում կարող են առաջնային նշանակություն ունենալ (օրինակ Զվեբեկ, Ալանդյան կղզիներ և այլն), քանի որ նրանք անփոփոխության ապահովման խնդիր չեն ունեցել: Մինչդեռ Ղարաբաղյան հակամարտության պարագայում, ինչպես նրա շարժընթացն է վկայում, ոչ միայն այդ կարիքի բավարարման և ապահովման երեշխիքներն են խիստ կարևոր³, այլև առանց երաշխավորված անփոփոխության, անհնարին է իրագործել մյուս բոլոր ոլորտներում նախատեսվող զարգացման հնարավորությունները:

3. «Համաձայնագրի» նախաբանում հակամարտության կարգավորման անհրաժեշտությունը ներկայացված է «խաղաղության և համագործակցության առավելության... ժողովրդների բարգավաճման և բարեկեցության» և նմանատիպ՝ գերազանցապես տնտեսական զարգացման հեռանկարների մասին հիմնավորումներով, որը զարմանալիորեն շատ քիչ է տարբերվում 1921 թվականի հուլիսի 5-ի ՌԿ/Ե/Կ ԿԿ կոմբյուրոյի պլենումի՝ «Ելնելով մուսուլմանների և հայերի միջև ազգային խաղաղության անհրաժեշտությունից և Վերին ու Ներքին Ղարաբաղի տնտեսական կապերից...»⁴ և 1988թ. մարտի 24-ի ԽՍՀՄ Կենտկոմի ու ԽՍՀՄ Նախարարների խորհրդի ընդունած «Ադրբեյջանական ԽՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի սոցիալ-տնտեսական զարգացումը 1988-1995 թթ. արագացնելու միջոցառումների մասին»⁵ որոշումների բովանդակությունից: Վերոնշյալը թույլ է տալիս կարծելու, թե ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների, այդ թվում՝ ԱՄՆ-ի և Ֆրանսիայի ներկայացուցիչների մոտ տարբեր պատճառներով գերակայել է այն մտածելակերպը⁶, որի հիմնավորմամբ խորհրդային տարիներին Լեռնային Ղարաբաղը

¹ Հաշվի առնելով, որ փաստաթղթի հրապարակումից հետո պաշտոնական Երևանի Մինսկի խմբի համանախագահներին ներկայացված դիրքորոշման մեջ արձանագրված են մի շարք առարկություններ, իսկ այնուհետև փորձագիտական շրջանակներում իրականացվել են համապատասխան վերլուծություններ, մեր վերլուծությունն առավելապես կունենա խորքային բնույթ՝ փաստաթղթի պատճառահետևանքային կապերի բացահայտման ուղղվածությամբ:

² Ըստ Օսկանյանի Վ. «Առաջարկները համանախագահներն էին գրել, այնտեղ որոշ դրույթներ կային այն փաստաթղթից, որի շուրջ մենք բանակցում էինք: Առաջինը, որը փայլեթային էր, որտեղ կային նաև կարգավիճակի մասին դրույթներ, բոլորովին նորություն էր, որովհետև մենք և դարաբաղյան կողմն ադրբեյջանցիների հետ կարգավիճակ չենք բանակցել, երբեք»: *ՏԻՍ Հակոբյան Թ.*, *Կանաչ ու սև*: Արցախյան օրագիր: Երրորդ հրատ, Եր., 2011, էջ 277-278:

³ Մաֆարյան Ս., նշվ. աշխ., էջ 93:

⁴ Գազ. "Коммунист", М., 29 марта 1988г.

⁵ "Вестник архивов Армении", 1989г., № 2, д. 14, с. 77-78.

⁶ Ումանք հավելված են այդպիսի մոտեցումը կապել Արևմուտքի՝ մասնավորապես ԱՄՆ-ի կողմից Ադրբեյջանական նավթից ակնկալվող տնտեսական շահերի հետ: Չսնմացնելով նավթի դերը որոշումների կայացման գործընթացում, այդուհանդերձ կարծում ենք, որ նման մոտեցումները կրելով տնտեսական դետերմինիզմի ազդեցությունը, միակողմանի բնույթ են կրում և չեն կարող բացահայտել խնդրի առարկայի ողջ բովանդակությունը:

քոնակցվել է Ադրբեջանին: Այսինքն՝ ի սկզբանե փորձ է արվել անվտանգության և ինքնության ապահովման հետ կապված հարցերը, որոնք Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում առաջնային տեղ են զբաղեցրել, և հիմնախնդիրն առաջացել է գերազանցապես այդ սպառնալիքին դիմակայելու հետևանքով, քողարկել տնտեսական զարգացման, բարեկեցության և այլ հիմնավորումների քողի ներքո:

4. Այն, որ Ադրբեջանի կազմում Լեռնային Ղարաբաղին թեկուզև ամենալայն ինքնավարության տրամադրումը անվտանգության և խնդրի լուծման իրական երաշխիքներ չեն պարունակում, հայտնի փաստ է: Դրա մասին է վկայում ոչ հեռավոր անցյալի Խորհրդային Միության՝ ազգերի ու ժողովուրդների եղբայրական պետության մեջ ԼՂԻՄ-ի պատմական փորձը: Եթե ԽՍՀՄ ամբողջատիրական համակարգը չի կարողացել իր ներսում ապահովել արցախահայության և ընդհանրապես ադրբեջանահայության անվտանգությունը Բաքվի իշխանություններից, ապա դժվար է հավատալ, թե ՄԱԿ-ը, որը սույն համաձայնագրի երաշխավորը պետք է դառնար (Համաձայնագիր թիվ 1, կետ 13), կամ որևէ միջազգային կառույց ու երկիր արդի քառսային աշխարհում կկարողանան այդ խնդիրն արդյունավետորեն իրագործել, մանավանդ, որ ՄԱԿ-ի խաղաղարար գործունեության անարդյունավետությունը բազմիցս է ապացուցվել¹:

5. Հարկ է ընդգծել, որ ցուցաբերվող մոտեցումներն ամբողջական ու համապարփակ չեն՝ չնայած տարբերակներին տրված անվանմանը: Ընդ որում ոչ միայն այն իմաստով, որ անվտանգության երաշխիքները բավարար չափով ապահովված չեն, այլև գուտ կառուցվածքային-ինստիտուցիոնալ մոտեցումը խնդիրն բավականին խոցելի է: Մասնավորապես կամային գործոնը (լուծման կախվածությունը կամքից, մյուս կողմին հարգելու, անցյալի խոցելի մոռանալու կամքը) կամ պարզապես ենթադրվում է կամ ակնկալվում է, թե կողմերին կթելադրվի կարգավորման ընթացքին հետևողների կողմից՝ «դրսից (ՄԱԿ, ԵԱՀԿ), կամ էլ ձեռք կբերվի հնթացա»²: Մինչդեռ Ղարաբաղյան հակամարտության տարեգրությունը ցույց է տալիս, որ այստեղ անհրաժեշտ են կարգավորման մեխանիզմների առավելագույնս հստակեցում, որոնք կբացառեն կամային որոշումների ընդունումն ու ձեռք բերված պայմանավորվածությունների խախտումը:

6. Թիվ 1 համաձայնագրի 5-րդ կետով նախատեսվում է «իրականացնել տեղահանված անձանց վերադարձը նախկին մշտական բնակության վայրեր՝ **Բաժանարար գոտում (ընդգծումն իմն է,- Հ. Փ.)**»: Եվ քանի որ «*Ուժերի դուրսբերման արդյունքում ազատված տարածքներն են վերաժվում Բաժանարար գոտու*» (թիվ 1 համաձայնագրի երրորդ կետ), ստացվում է, որ այդպես էլ խոսք չկա նախկին ԱդրխՍՀ վարչական սահմաններում հայտնված Դաշտային Արցախի և ընդհանրապես ադրբեջանահայության՝ իրենց բնակության վայրեր վերադարձի ու նրանց անվտանգության ապահովման մասին:

Վերոնշյալն ամրագրված է նաև «Հակամարտ կողմերի վստահության ամրապնդմանն ուղղված միջոցառումներ» բաժնի 3-րդ մասում: Դրանով նախատեսվում է «*Իրականացնել երկխոսություն ՄԱԿ-ի փախստականների հարցերով Գերագույն կոմիսարի և Կարմիր խաչի միջազգային կոմիտեի օժանդակությամբ՝ մարդասիրական պահանջարկների գնահատման նպատակով (ինչպես ադրբեջանական տեղահանված անձանց համար, այնպես էլ Լեռնային Ղարաբաղի ներսում)*»:

Այսինքն՝ և միջնորդները, և մենք երկար տարիներ խոսել ենք ադրբեջանցի փախստականների վերաբերյալ, այն դեպքում, երբ ադրբեջանցի փախստական չկա: Խնդրի նման հարցադրումները տանում են դեպի հիմնախնդրի կերպարը, որի սխալ

¹ Տե՛ս Փաշայան Հ., *Միջազգային խաղաղապահներ: Նրանք ի վիճակի են ապահովելու մեր խաղաղությունը*, ՊՐ «Մարտիկ» պաշտոնաթերթ, թիվ 49 (759), էջ 6, 8-15 դեկտեմբեր, 2007թ.

² Սաֆարյան Ս., նշվ.աշխ., էջ 95:

ընկալմանը մենք ինքներս մասնակցել ենք էն գլխից, հենց մեր բացթողումներն այստեղ են¹:

Բավականին ուշագրավ ու վտանգավոր է նաև Թիվ 2 համաձայնագրի 10-րդ կետը, քանի որ, ըստ էության այն մի կողմից՝ երկրամասը հայաթափելու հնարավորություն էր ստեղծում, մյուս կողմից՝ դրանով արցախահայերը դիտվում էին որպես եկվորներ, հետևաբար պայմաններ էին ստեղծվում հայրենիք վերադառնալու համար: Դրանում մասնավորապես արձանագրված է՝ **«Լեռնային Ղարաբաղի քաղաքացիները...կարող են ցանկացած ժամանակ արտագաղթել Հայաստան և կարող են ստանալ հայաստանյան քաղաքացիություն՝ Հայաստանի հանրապետություն մշտական արտագաղթի դեպքում (տես Իսրայելի «Վերադարձի մասին» օրենքը)»:**

Նույն տարում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներն առաջարկել են «Լեռնային Ղարաբաղի զինված հակամարտության դադարեցման մասին Համաձայնագրի» նոր նախագիծ, որը հենվում էր «փուլային» եղանակով հակամարտող կողմերի միջև համաձայնության հասնելու սկզբունքի վրա: Ըստ այդ առաջարկության՝ նույնպես առաջնային էր համարվում զինված հակամարտության հետևանքների վերացման հիմնախնդիրը, այսինքն՝ զինված ուժերի դուրս բերման², բուֆերային գոտու ստեղծման և միջազգային խաղաղարար ուժերի տեղաբաշխման, փախստականների³ և տեղահանված անձանց վերադարձի խնդիրները և միայն դրանից հետո՝ համաձայնագրի 11-րդ կետով ենթադրվում էր, որ *երեք կողմերը, վերջ դնելով հակամարտության ժառանգական կողմին, կհամաձայնեն Մինսկի համաժողովի համանախագահների օժանդակությամբ բարեխղճորեն շարունակել բանակցությունները համընդգրկուն կարգավորմանը հասնելու նպատակով՝ ներառյալ ԼՂ կարգավիճակի, ինչպես նաև Լաչինի, Շուշիի և Շահումյանի հիմնահարցերի լուծումը*⁴: Այսինքն՝ փուլային լուծման պարագայում «փաթեթայինում» եղած անորոշություններին գումարվում էին նորերը՝ ոչ միայն Լեռնային Ղարաբաղի հետագա կարգավիճակով պայմանավորված, որը *թողնվում էր հակամարտող կողմերի ցուցաբերվելիք բարեխղճությանը*, այլև ընդհանրապես Ադրբեյջանի՝ նպաստավոր իրավիճակում հայտնվելու պարագայում հետագա բանակցությունները շարունակելու ցանկության բացակայության հետ կապված:

Նախորդից տարբերվող և ներկայիս ձևախնդրված բանակցությունների իրական ձևաչափի վերականգնման ու պաշտոնական Բաքվի՝ Արցախին բանակցություններից հեռու պահելու տեսանկյունից, փաստաթուղթը կարևոր փաստարկ է պարունակում 1994թ. Բուդապեշտի գազաթնաժողովի որոշումների կատարմանն ուղղված հղումների (նախաբան, 4-րդ կետի առաջին պարբերություն) և հակամարտության երեք կողմ ունենալու հանգամանքի արձանագրման տեսանկյունից (11-րդ կետի առաջին պարբերություն):

Հակամարտության կարգավորման փուլային մոտեցումը որպես հիմք ընդունվեց ՀՀ-ի և ԱՀ-ի կողմից, սակայն մերժվեց Լեռնային Ղարաբաղի կողմից, քանի որ

¹ Մանասյան Ա., *ԼՂ Հակամարտության կերպարը պետք է փոխել*, ԼՂՀ ՊՆ «Մարտիկ» պաշտոնաթերթ, թիվ 27, թիվ 28, 2010թ.

² Հարկ է նշել, որ հայկական դիվանագիտության բացթողումներից մեկն էլ կապված է հակամարտության կերպարը ձևավորող սկզբունքներից մեկի սխալ ընկալման հետ, որով միջազգային հանրությունը, այդ թվում՝ նաև ԵԱՀԿ ՄՍ երկրները խոսելով գրավյալ տարածքներից զինված ուժերի դուրս բերման մասին, նկատի են ունենում հայերի կողմից «գրավված» տարածքները: Մինչդեռ, կոնկրետ այս պարագայում պետք է ասվեր, որ գրավված տարածքներ ունի նաև ադրբեյջանական կողմը: Իսկ ընդհանրապես՝ հիմնախնդրի միջազգային իրավական նորմերի տեսանկյունից, միայն ադրբեյջանական կողմն ունի գրվավյալ տարածքներ:

³ Ինչպես նախորդիվ, այստեղ ևս հարցի մասին խոսելիս, միջազգային հանրությունը նկատի է ունենում այսպես կոչված ադրբեյջանցի փախստականներին և ներքին տեղահանվածներին: Այն դեպքում, երբ ադրբեյջանահայությունն է դարձել դարաբաղյան հակամարտության անմիջական զոհը:

⁴ *«Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիր. կարգավորման ուղիներ»*, Խորհրդարանական լսումներ, 29-30 մարտի, 2005թ., Եր., 2006, էջ 470-478:

բացակայում էին այն նրաշխիքները, որ ԼՂՀ կողմից վերահսկվող տարածքների վերադարձից հետո ադրբեջանական իշխանությունների մոտ չէր անհետանա ցանկությունը բանակցությունների հետագա շարունակման համար: Միաժամանակ, 1997թ. աշնանից «փաթեթային» ու «փուլային» տարբերակների շուրջ ՀՀ-ում սկիզբ առած քննարկումների արդյունքում զարգացումները հանգեցրին Լ. Տեր-Պետրոսյանի հրաժարականին: Հայաստանում կատարված իշխանափոխությունը՝ հակամարտության կարգավորման վերոնշյալ տարբերակների մերժումով, ըստ էության տեղի ունեցավ բանակցային գործընթացում ՀՀ-ի օգտին դրական տեղաշարժով: ՀՀ նախկին արտգործնախարար Վ. Օսկանյանը, խոսելով այս թեմայով, շեշտել է, որ եթե գիշերը ժամը երեքին Ի. Ալիևին քնից արթնացնենք և նրա առաջ դնենք 1997թ. փուլային տարբերակը, նա առանց մտածելու կստորագրեր: «Իսկապես այնպես չէ, որ բանակցությունների արդյունքում քրտինք թափելով ինչ-որ փաստաթուղթ էինք ձեռք բերել, հետո մենք մերժեցինք և այսօր այդ բոլորը վերականգնել հնարավոր չէ: Դա փուլային տարբերակ էր: Այսինքն՝ տվեք տարածքները, հետո նայենք ինչ կլինի կարգավիճակը»⁸:

Մեկ ուրիշ անգամ անդրադառնալով նախորդ շրջանում առաջարկված տարբերակներին՝ Վ. Օսկանյանը հետևյալն է նշել. «Ես տեսնում եմ լուրջ հնարավորություն, որ մենք կկարողանանք ամրագրել Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքը և հասնել դրա միջազգային ճանաչմանը: Այսօր Պրահայի գործընթացն է գնում, ես գիտեմ, թե սեղանի վրա ինչ կա, հնարավորություն եմ տեսնում ստանալ ավելին, քան ստանալու էինք 1997թ.»⁹:

Ադրբեջանա-դարաբաղյան հակամարտության կարգավորման միջնորդների առաջադրած վերոնշյալ տարբերակներից կարելի է մի շարք հետևություններ անել.

ա) Քաղաքական տեսանկյունից՝ հակամարտության կարգավորման նպատակով կողմերին ներկայացված համապարփակ կարգավորման փաթեթային և փուլային տարբերակները դարձան հրադադարին հաջորդած տարիների բանակցությունների ու դիվանագիտական պայքարի արդյունքներն ամփոփող այն հանգրվանը, որի կերպարով խնդիրը ներկայացավ միջազգային հանրությանը: Հակամարտության հանգուցալուծման այսպիսի տարբերակների գոյությունը պաշտոնական Բաքվի ընկալումներում փաստորեն նախադեպ ու նշաձող դարձավ, որի իրականացմանն ուղղվեց նրանց հետագա ողջ տեսական ու գործնական քաղաքականությունը: Դարաբաղյան հակամարտության ռազմական դիմակայությունում հաղթանակած հայկական կողմը, չունենալով անհրաժեշտ պատրաստվածություն, հետպատերազմյան առաջին տարիներին պարտվեց հակառակորդի հետ մեկնարկած քաղաքական ու դիվանագիտական առճակատմանը՝ սպառնալիքի տակ դնելով ռազմական դիմակայության ընթացքում ձեռք բերած հաջողությունները: 1994թ. հրադադարի հաստատմանը հաջորդած տարիները վկայում են, որ պատերազմն այդպես էլ չի ավարտվել, և քաղաքական ու դիվանագիտական պատրաստվածությունը շարունակում են հանդես գալ որպես հակամարտության կարգավորման այս կամ այն տարբերակների գոյավորման նախապայման, քանի որ, ինչպես ասում են, գորահրամանատարները հաղթում են ճակատամարտերը, իսկ պատերազմները՝ դիվանագետները:

բ) Իրավական առումով փաթեթային և փուլային տարբերակները հանդիսանում են հակամարտող կողմերին ներկայացված համապարփակ կարգավորման այն փաստաթղթերը, որոնցում հիմնախնդրի լուծումը ներկայացված է Ադրբեջանի տարածքային ամբողջականության շրջանակներում: 1998-ից հետո հակամարտող կողմերին այլևս կարգավորման նոր տարբերակներ չեն ներկայացվել: Իսկ Մադրիդյան, Կազանյան և այլ անվանումներ ստացած փաստաթղթերը ներառում էին ոչ թե կարգավորման տարբերակները, այլ սկզբունքները, չնայած պաշտոնապես առ այսօր այն հանրությանը չի ներկայացվել: Վերջին հանգամանքը մի կողմից պաշտոնական Բաքվին թույլ է տալիս հակամարտության չկարգավորվածության մեջ մեղադրել հայկական կողմերին (եթե ընդունած լինեին ապա հակամարտությունը

վաղուց լուծված կլինեն), մյուս կողմից՝ որն ավելի վտանգավոր է, հիմք է տալիս անհրաժեշտության դեպքում սեփական ճշմարտացիությունը իրավականորեն հիմնավորելու համար հղում կատարել նշված տարբերակներին:

զ) Պատմական առումով փաթեթային և փուլային տարբերակները հայկական կողմերի համար պարունակում էին միանգամայնորեն անընդունելի դրույթներ: Միայն այն ձևակերպումը, որով առաջարկվում էր խնդիրը կարգավորել նախկին ԼՂԻՄ սահմաններում՝ թեկուզև ամենալայն կարգավիճակով, անընդունելի էր դարձնում նրա իրականացումը: Գործնականում դա նշանակում էր 1991 թվականին պատմության գիրկն անցած Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության տարածքային ամբողջականության վերականգնում, որի իրավահաջորդությունից մերօրյա Ադրբեջանի Հանրապետությունը սահմանադրորեն հրաժարվել է¹: Գաղտնիք չէ, որ հակամարտության մերօրյա փուլի ծագումը կապված է ԱդրևՍՀ կենտրոնական իշխանությունների հակահայկական քաղաքականության իրականացման և այդ իրավիճակից դուրս գալու արցախահայության՝ անվտանգային ելքերի փնտրտուրի հետ: Դրան էր միտված 1988թ. փետրվարի 20-ին մայր Հայաստանին միանալու, 1989թ. Մարզի կառավարումը Մոսկվայի անմիջական ենթակայությանը հանձնելու և վերջապես 1991-ին անկախ պետականություն ստեղծելուն ուղղված որոշումները: Այսինքն՝ ԱդրևՍՀ կազմում ԼՂԻՄ ներառումն է պայմաններ ստեղծել Արցախում և նրանից դուրս թողնված հայկական ու հայաբնակ մյուս վայրերում շարունակել հայերի բնաջնջման թուրքական քաղաքականությունը, որն այսօր էլ շարունակում է մնալ թուրք-ադրբեջանական քաղաքական օրակարգում:

դ) Թե՛ փուլային, թե՛ փաթեթային տարբերակներում հակամարտության կարգավորման նպատակով, որպես առաջնային օրակարգ ներկայացված է հիմնախնդրի բուն էության հետ ոչ մի առնչություն չունեցող հակամարտության հետևանքների վերացումը: Ընդ որում այստեղ ևս իրականությունը ներկայացված է կամայական մեկնաբանությամբ: Բանն այն է, որ 1988թ. փետրվարի 20-ի արցախահայության մայր Հայաստանին միանալու որոշումն ընդունելու պահին ադրբեջանցի փախստականներ չեն եղել: Հիմնախնդրի հակամարտության² վերաճելու պահին առաջին փախստականները Սուրգայիթի, Բաքվի, Գետաշենի և ԱդրևՍՀ վարչական ենթակայության տակ հայտնված, իրենց պատմական հայրենիքում ապրող հայերն էին: Այնուհետև օրինականորեն անկախություն հռչակած Արցախի Հանրապետության դեմ բացահայտ ռազմական գործողություններ սանձազերծվեց, որի առաջին փուլում ադրբեջանական կողմին հաջողվեց գրավել նորանկախ հանրապետության տարածքի գրեթե կեսը: Դրանց հետևանքները և հայերի դեմ իրագործված թուրքական դաժանությունները հանրահայտ փաստեր են³:

ե) Իհարկե ակնհայտ է, որ ոչ միայն փուլային, այլև փաթեթային կարգավորումը չի կարող մեկ ակնթարթում կայանալ, այն պետք է իրացվի որոշակի ժամանակահատվածում՝ նախանշված հաջորդական քայլերի միջոցով: Դրանց տարբերությունն այն է, որ փաթեթային կարգավորման դեպքում կողմերը պայմանավորվում են իրենց առաջինից մինչև վերջին քայլերի ու դրանց իրականացման ժամանակացույցի մասին: Այսինքն՝ կողմերին սկզբից էլ պարզ է լինում, թե ինչպիսի պատկեր են ունենալու ցանկացած պահի, այդ թվում՝ հատկապես գործընթացի վերջում: Սակայն ցանկացած հիմնախնդրի կարգավորման

¹ Տե՛ս Փաշայան Հ., *Քաղաքական փաստաթղթերը Ղարաբաղյան հիմնախնդրի փաստաթղթերում և կարգավորման գործընթացում*, Ստեփանակերտ, 2016, էջ 85-107:

² Այս մասին տե՛ս Փաշայան Հ., Բալայան Լ., *Ղարաբաղյան հակամարտության կարգավորման խոչընդոտները*,

³ «Օղակ» ռազմագործողության մասին տե՛ս Кривоуцков В., *Мятежный Карабах*. Из дневника офицера МВД СССР. Издание второе, дополненное. М., Голос-Пресс, 2007. Դրանք դրսևորվեցին ոչ միայն 1991-1994թթ. պատերազմական օրերին, ինչպես Մարադայի ցեղասպանությունը՝ տե՛ս <http://maragha.nk.am>, այլև 2016թ. քաղաքային առճակատման ընթացքում, տե՛ս Հասարակայան Ս., *Ադրիլյան քաղաքային առճակատում (Արցախ 02-05.04.2016թ.)*, Եր. 2017թ.:

գործընթացում էականը ոչ այնքան խնդիրները փուլ առ փուլ կամ փաթեթով լուծելն է, որքան նրա կարգավորման փիլիսոփայությունը: Դրա ընթացքում պետք է հաշվի առնվի նրա ծագման և զարգացման շարժընթացը և ըստ այդ հերթականության լուծվեն նաև ծագած խնդիրները, այլապես ներկայացված տարբերակները զրկված են իրականանալու հնարավորությունից: Այլ հարց է, որ արդեն ներկայացված տարբերակների պատմական փորձը հաշվի առնելով՝ հայերիս մոտ փուլային կարգավորումը ասոցացվում է 1997-ին միջնորդների ներկայացրած տարբերակի հետ, որում խախտված էր վերոբերյալ հանգամանքը: Նույնը վերաբերում է նաև Մադրիդյան կոչված սկզբունքներին: Ուրեմն, հակամարտության կարգավորման համար իրատեսական կլինի այն տարբերակը, որը կներառի հակամարտության կարգավորման պատճառահետևանքային կապը՝ համապատասխան հերթականությամբ ու խնդիրների լուծումով, հաշվի առնելով թե հիմնախնդիրը զարգացման ինչ հերթականություն է ունեցել (կարգավիճակի հարց, հաղորդակցության խնդիրներ, փախստականների հարց և տարածքների հարց):

Այսպիսով՝ միջնորդների կողմից տարածքային ամբողջականության պահպանման դրույթի շրջանակներում Լեռնային Ղարաբաղը նախկին ԼՂԻՄ սահմաններով նորից Ադրբեյջանի կազմ մտցնելուն ուղղված սկզբունքի ամրագրումը 1997թ. ներկայացված փաթեթային, իսկ այնուհետև առավելապես հակամարտության հետևանքների վերացմանն ուղղված փուլային տարբերակներն ի սկզբանե խոչընդոտ դարձան հակամարտության կարգավորման հետագա կառուցողական քայլերի համար:

Մյուս կողմից՝ փուլային կամ փաթեթային անվանումները չպետք է քողարկեն հակամարտության կարգավորման պատճառահետևանքային կապերն ու հիմնական խնդիրը՝ Արցախի Հանրապետության կարգավիճակի և նրա ժողովրդի անվտանգության երաշխիքների ամրագրումը, մանավանդ, որ ներկա իրողությունները արդյունք են Ադրբեյջանի կողմից Արցախի դեմ ուղղված ուղակի ռազմական ագրեսիայի:

Վերջապես, Հակամարտության կարգավորմանն ուղղված քայլերի վերլուծությունը ցույց է տալիս, որ այս կամ այն տարբերակի ձևավորումը (այնուհետև նաև դրա իրացումը) անմիջականորեն կապված է խնդրի **իրավաքաղաքական փաստարկումների ձևակերպումներից, դրանց գիտակցումից ու ներկայացումից:** Ամերիկյան քաղաքագետ Արթուր Բենտլիի խոսքերով՝ քաղաքականությունը նպատակներին և շահերին հասնելու համար կազմակերպված և փոխադարձ պայքարի պրոցես է (հակամարտությունների կարգավորման գործընթացում այդ պայքարն ավելի սուր և բացահայտ բնույթ է կրում, -Հ, Փ.), իսկ քաղաքական որոշումների ընդունումը համապատասխան խմբերի միջև գոյություն ունեցող ուժերի արտահայտությունն է¹: **Այս ամենից և հակամարտության կերպարի հանրային /միջազգային/ ընկալումներից կարելի է եզրակացնել, թե խնդրի լուծման ինչպիսի հանգրվանի է հնարավոր հասնել կարգավորման բանակցային գործընթացում:**

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, ք.գ.դ. Ա.Փ.Ենգոյանը:

¹ Мухаев Р., *Политология*: учебник. М., 2009, ст. 327.